Դ.

ԹԷՈԴՈՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — ՊԼԲ = 1384. ԱՊՐԻԼ 2.

(Վերահաստատե զՏէր Յովհաննէս յարքեպիսկոպոս Լեհահայոց առաքելով ընդ նմին նուիրակ զՆերսէս աւագ սարկաւագ)։

ԱՅՍ մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն, ԹԷՈԴՈՐՈՍԻ ծառա ծառայիցն Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ, Շնորհաւք և ողորմութեամբ նորին կաթողիկոսի ընթհանուր ամենայն Հայաստանեաց. Զոր աւրհնութեամբն Աստուծոյ հայրական հոգաբարձութեան գթով՝ գրեմք ի յամէնաւրհնեալ և յաստուածապահ յանուանի և յականաւոր թագաւորական և քրիստոնէական մայրաքաղաքն Լովն և յամենայն վիճակն իւր, ի Լուցկայն, ի Մանքրմանն և ի բնակիչքն իւր. Որոց այդոցիկ ամենեցուն բնակչացդ ի միասին, Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգւոյ յոյժ սիրեցեալ բարեպաշտ և քրիստոսասէր թագաւորիդ թագաւորաց՝ և ակնկալիդ ամենայն քրիստոնէից ինքնակալիդ արիականաց՝ և մեր պարծանաց աչեաց [1] չափ սիրեցեալ եղբաւրդ Ըռէ Տինգուռելիդ [2] և արքայիդ. քրիստոսասէր և փառաւոր ամէնամեծ պարոնիդ Լովիդ և Մեստեշնուդ. Գովելի և հավատարիմ պարոն Շաւլ-թիսիդ Աբրահամիդ. Իմաստուն վաճառականացդ՝ ծովայնոցդ և քաղաքայնոցդ առհասարակ. Հարկաւոր և բարեգործ տանուտրացդ, պարոն Փանոսի որդեցդ՝ պարոն Աւրանիդ և պարոն Աւլանիդ և այլոցն ամենեցուն. Ձեռնահմուտ արվեստագէտացդ. Աշխատասէր հողագործացդ, և համաւրէն ի Քրիստոս Աստուած ճշմարիտ հավատացելոցդ՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, մեծամեծաց և փոքունց, և ամենայն չափս հասակի։ Ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, մեծաւ փափաքմամբ ի շնորհացն Քրիստոսի, կարողութեամբն Աստուծոյ Հաւր, աղաւթիւք Սուրբ Լուսավորչին մերոյ Գրիգորի,

1. Այսպէս էր ի բնագրին։

2. Շատ հետաքրքրական է գիտնալ, թէ ո՞վ է այդ թագաւորդ և ինչ անունն. զի յետ մահուան Լոդովիկոսի Ունգարաց թագաւորին (1382) որ և Լեհաց տիրէր, քանի մի տարի չփոթութիւն էր ի Լեհաստան, և չատեր չանային թագը կորզել, մինչեւ որ տուին զայն Հեռուիկի՝ դստեր Լոդովիկոսի. այս միջոց ժամանակին գրուած է կոնդակս. զուցէ Խոֆուոր Ռոնֆրոյ նշանակէ Re (Roi) d'Hongrois.